ՏԱՐԵՎԵՐՋՅԱՆ ՔՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ ԵՎ ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹՅՈՒՆ Ս. ԳԵՂԱՐԴԱՎԱՆՔ

Մայիսի 22-ին Գևորգյան Հոգևոր Ճեմարանում սկսվեցին ուսումնական տարին եզրափակող քննությունները: Ճեմարանում իրենց տարեվերջյան քննությունները հանձնեցին նաև Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցի և Շիրակի Ընծայարանի բարձր լսարանների սաները, որով առավել շեշտվեց հոգևոր այս երեք հաստատությունների միասնական մեկ համակարգ լինելը:

Այս քննությունները նշանակալից էին նաև նրանով, որ 130-ամյա այս հաստատության սաները քննություն էին հանձնում ոչ միայն որպես ճեմարանականներ, այլ նաև որպես Աստվածաբանական համալսարանի սաներ, քանի որ կառավարության որոշմամբ Ճեմարանը ճանաչվել և իր արժանի տեղն է գրավել Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունների շարքում:

Քննական պատասխանատու և լարված շրջանն իր լրումին հասավ Ս. Գեղարդավանքում, ուր ուխտագնացության մեկնեցին հոգևոր կրթական երեք հաստատությունների սաները, և Վեհափառ Հայրապետի նախագահությամբ տեղի ունեցավ տարեվերջյան ամփոփիչ մանկավարժական ժողովը:

Այսպիսով քննություններից հետո Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսչության նախաձեռնությամբ և Վեհափառ Հայրապետի օրհնությամբ ու անմիջական մասնակցությամբ կազմակերպվեց ուխտագնացություն դեպի Գեղարդավանք: Թերևս սա վերջին տասնամյակում Գեղարդավանքում եղած ամենաբազմամարդ ուխտագնացությունն էր, որին մասնակցում էին Գևորգյան Հոգևոր Ճեմարանի, Վազգենյան Դպրանոցի, ինչպես նաև Շիրակի Ընծայարանի սաները, Գևորգյան Ճեմարանի ու Վազգենյան Դպրանոցի տեսչական ու դասախոսական կազմը:

Ուխտագնացությունը մեծ խորհուրդ ունի. այն երկնային Տիրոջը մերձենալու, Նրան ընդառաջ ելնելու ճանապարհ է: Բացի հոգևոր ներաշխարհը նորոգելուց և ամրապնդելուց, ուխտագնացությունը մեկ նպատակ ևս ունի. ազգանվեր հոգևորական դառնալու ճանապարհին կարևոր է մեր հնամյա տաճարներ ուխտի գնալը, մեզ ու մերը ճանաչելը: Հույսի, հավատի նման հոգեկերտ վկաները, ինչպիսին Գեղարդավանքն է, մեր հոգում բորբոքում են այն խանդավառությունը, որ մեզանից յուրաքանչյուրը ժառանգն ու տերն է այս ամենի, պահապանը այն սրբությունների, որոնք դարեր շարունակ իրենք իսկ պահպանել ու պահպանում են մեզ իրենց աստվածային օրհնությամբ ու մաքրությամբ:

Գեղարդավանքում Վեհափառ Հայրապետին դիմավորեցին ուսանողներն ու դասախոսները: Հազարամյա տաճարի կամարների ներքո Նորին Սրբությունն իր աղոթքը վերառաքեց առ Աստված Հայաստան աշխարհի, Հայաստանյայց մեր Մայր Եկեղեցու և հոգևոր հաստատությունների բարգավաճման ու զորացման համար: Այդ անկեղծ ու սրտաշարժ վայրկյաններին իրենց երկյուղած աղոթքներն էին երկինք ուղղում նաև ուսանողները, դա-

սախոսները և ներկա հավատացյալ ժողովուրդը: Ստեղծվել էր աղոթական մի մթնոլորտ, հինավուրց վանքը արձագանքում և ավելի ազդու էր դարձնում հոտի և հովվի միասնական աղոթքը:

Հայրապետը ներկաներին մաղթեց ու հորդորեց առաջնորդվելու առ Աստված, Սուրբ Եկեղեցին և առ Հայրենիքը պարտքի ու սիրո զգացումով, մշտապես աղոթելով, որ Աստծո ամենախնամ Աջը հովանի լինի ու միասնական պահի Մայր Հայրենիքն ու Եկեղեցին:

Գեղարդավանքում Վեհափառ Հոր նախագահությամբ տեղի ունեցավ նախատեսված մանկավարժական տարեվերջյան ժողովը, որն ամփոփեց ու գնահատական տվեց տարվա ընթացքում եղած բացթողումներին և ձեռքբերումներին:

Երեկոյան ուխտավորները վերադարձան Մայր Աթոռ՝ իրենց հոգում բերելով Ս. Գեղարդավանքի օրհնությունը, նոր խանդավառությամբ լծվելու Մայր Եկեղեցու և Հայրենիքի շենացման ու բարգավաճման սրբազան գործին:

Պատրաստեցին
Գևորգյան Հոգևոր Ճեմարանի
Ջ լսարանի սաները